ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 246- Ա **19 հոկտեմբերի 2018 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 01/15.2/8091-18 գրությունը ***կարգադրում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում տեղակայված հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում առկա հասարակական զուգարանների նկատմամբ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասով, ինչպես նաև ՀՀ առողջապահության նախարարի 16.04.2009թ-ի N 06-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոններով և նորմերով ներկայացված պահանջների կատարման ընթացքը ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դվոյան Սևակ	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ, նախագահ
Սաֆոյան Աննա	- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի վարիչ
Բիձյան Հակոբջան	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ
Հոդաբաշյան Արայիկ	- մարզպետարանի աշխատակազմի ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ
Հովհաննիսյան Սվետլանա	- ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի «Հյուսիս արևելյան» տարածքային կենտրոնի պետի տեղակալ /համաձայնությամբ/

Աշուղյան Արմինե - ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի «Հյուսիս արևելյան» տարածքային կենտրոնի հիգիենիկ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝

1) հասարակական զուգարանների նկատմամբ ներկայացված պահանջները խախտած անձանց նկատմամբ կիրառել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ.

2) մինչև 2018 թվականի հոկտեմբերի 24-ը կատարված աշխատանքների արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 01/15.2/8091-18 գրությամբ ներկայացված ձևաչափին համապատասխան:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Արամ Թարվերդյանին:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

ք. Գավառ